Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի և ժամանակացույցի պատրաստման համառոտ ուղեցույց

Մասնագիտական կրթության որակի ապահովման տեսակետից խիստ կարևոր է հավատարմագրման գործընթացի արդյունքում հաստատության հետագա բարելավման գործողությունների պլանավորումը և իրականացումը: Այդ նպատակին է ծառայում Հավատարմագրման կարգով պահանջվող և ուսումնական հաստատության կողմից մշակվող «**Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը և դրա ժամանակացույցը**» (այսուհետ՝ Ծրագիր):

Մյուս կողմից՝ ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրով նախատեսված է, որ «սահմանափակ ֆինանսավորման պայմաններում արդյունավետություն ապահովելու նպատակով… պետք է ներդրվեն ուսումնական հաստատությունների **առաջընթացի առանցքային ցուցիչները (KPI)»**:

Հաշվի առնելով, որ Ծրագրի կատարման արդյունքները միևնույն ժամանակ հաստատության միջանկյալ հաշվետվությունների և հաջորդ հավատարմագրման հիմքն են՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) Հավատարմագրման հանձնաժողովն իր որոշումներում հստակեցրել է, որ հաստատություններն, ելնելով գործընթացների սպասվող արդյունքների առանձնահատկություններից, հնարավորության դեպքում պետք է ներդնեն իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման **առաջընթացի առանցքային ցուցիչներ**, իսկ ՈԱԱԿ-ը մշտադիտարկումը կազմակերպի ըստ այդ ցուցիչների:

Այս ուղեցույցում ներկայացված է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի և դրա ժամանակացույցի» կազմման ՈԱԱԿ-ի կողմից առաջարկվող վերանայված ձևաչափը և հարցերի մեկնաբանությունը:

ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ստանալուց հետո ուսումնական հաստատությունն անմիջապես ձեռնամուխ է լինում Ծրագրի կազմման աշխատանքներին: Ծրագիրը պետք է ուղղված լինի փորձագիտական զեկույցում տրված խորհրդատվությունների իրականացմանը և վերհանված խոշոր խնդիրների հաղթահարմանը: Գործողությունները պետք է

կատարվեն հաստատության առաքելության և ընդհանուր ռազմավարության շրջանակներում և չխանգարեն նրա բնականոն աշխատանքը:

- Ծրագրի նախնական տարբերակն ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի և պահանջվող այլ փաստաթղթերի հետ միասին, հավատարմագրման ժամանակացույցով սահմանված ժամկետներում ներկայացվում է ՈԱԱԿ՝ գնահատման նպատակով փորձագիտախան խմբին տրամադրելու համար:

- Հավատարմագրման մասին որոշման կայացումից հետո 2 ամսվա ընթացքում հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերջնական, վերանայված ծրագիրը և ժամանակացույցը, որտեղ հաշվի են առնված Ծրագրի վերաբերյալ Հավատարմագրման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Ծրագիրը կազմվում է ըստ փորձագիտական խմբի առանձին խորհրդատվությունների, զեկույցում կամ հաստատության կողմից ինքնուրույն վերհանված խոշոր խնդիրների և պետք է հստակ ցուցադրի ոչ միայն դրանց ուղղությամբ հաստատության կողմից ակնկալվող վերջնական ձեռքբերումները, այլև սպասվող միջանկյալ արդյունքներն ըստ ժամանակային փուլերի:

Ծրագիրը պատրաստվում է **Հավելված 1-ում** ներկայացված ձևաչափով և անդրադառնում է հետևյալ կարևոր հարցերի պատասխաններին.

- **Փորձագիտական խմբի խորհրդատվությունը / վեր հանված խոշոր խնդիրը՝** այստեղ շարադրվում է փորձագիտական խմբի կողմից տրամադրված այն խորհրդատվությունը, որն ուսումնական հաստատությունն ընդունելի է համարում և պատրաստվում է իրականացնել: Նույնը վերաբերում է նաև փորձագիտական զեկույցում կամ հաստատության կողմից ինքնուրույն վեր հանված խոշոր խնդիրներին:

- **Ակնկալվող արդյունքը՝** ինչպիսի արդյունք(ներ) է ակնկալում ստանալ հաստատությունը խորհրդատվության իրականացման կամ խնդրի լուծման ավարտին,
- **Նախատեսվող միջանկյալ արդյունքները (քանակական և/կամ որակական)՝** նշված ակնկալվող արդյունքի ձեռքբերումը մշտադիտարկելու և այն գնահատելու տեսակետից հաստատությունն ինչպիսի միջանկյալ որակական և/կամ քանակական (KPI) արդյունքներ է նախատեսում ունենալ,
- **Տրամադրվող բյուջեն՝** միջանկյալ արդյունքի ձեռքբերումն ապահովելու համար հաստատությունն ինչպիսի բյուջետային ներդրում է պլանավորում իրականացնել,
- **Միջանկյալ արդյունքների գնահատման /ստուգման ժամկետները՝** ինչ ժամկետներում է ուսումնական հաստատությունը պատրաստվում գնահատել/ստուգել տվյալ փուլի միջանկյալ արդյունքը,
- **Գնահատման պատասխանատու ստորաբաժանումը՝** հաստատության որ ստորաբաժանումն է իրականացնելու տվյալ փուլի միջանկյալ արդյունքի գնահատումը,
- **Գնահատման հաշվետվության ձևը՝** ինչ եղանակով է ուսումնական հաստատությունը պլանավորում իրականացնել միջանկյալ արդյունքի գնահատումը (օր.՝ առաջընթացի առանցքային ցուցիչների վերլուծություն, աուդիտ, ինքնավերլուծություն ըստ չափանիշների, արտաքին փորձագետի գնահատում և այլն),
- **Որտեղ հասանելի կլինի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունն՝** անհրաժեշտության դեպքում արտաքին և ներքին շահակիցները կամ փորձագետները որտեղ կարող են ծանոթանալ գնահատման արդյունքներին (օր.՝ հաստատության համացանցային կայքէջ, ներքին ստորաբաժանումներերի փաթեթներ և այլն):

Հավելված 1.

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի ձևաչափ

1.	Փորձագիտական խմբի խորհրդատվությունը / վեր հանած խոշոր խնդիրը _____							
	Ակնկալվող արդյունքը	Նախատեսվող միջանկյալ արդյունքները (քանակական և/կամ որակական)		Տրամադրվող բյուջեն	Միջանկյալ արդյունքների գնահատման/ ստուգման ժամկետները	Գնահատման պատասխանատու ստորաբաժանումը	Գնահատման հաշվետվության ձևը	Որտեղ հասանելի կլինի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը / URL կամ ստորաբաժանումը /
1.1		1.1.1						
		1.1.2						
		1.1.3						
		1.1.4						
1.2		1.2.1						
		1.2.2						
		1.2.3						
		1.2.4						